Նվիրում եմ մերօրյա հերոս, սպարապետ՝ Վազգեն Սարգսյանի անմահ հիշատակին

Հայկ Եղիազարյան /«Սպիտակ» ջոկատի մարտիկ/

Վազգեն Սպարապետ,
Մերօրյա ասպետ,
Արած գործերդ
Կհիշվեն հավետ...
Դու արծիվ էիր Հայոց երկնքում,
Նենգ թշնամին էր քեզնից սարսափում,
Դու՝ դարավերջի վերջին մոհիկան
Մեր նոր պատմության հերոս զորական:
Ունեիր բազում իղձեր անկատար,
Ա~խ, ինչու՞ մեզնից դու շուտ հեռացար,
Չէ որ քարուքանդ մեր այս երկրում
Քո տեղը հիմա շատ է երևում:
Հայոց բանակի գլուխ կանգնեցիր,
Կառավարության գլուխ կանգնեցիր,
Ցանկանում էիր, որ քո երկրում
Ժողովուրդն ապրի անհոգ, անտրտում:
Ես քո շիրիմի առաջ եմ երդվում
Եվ իմ երդումը երբե՛ք չեմ դրժում,
Մեր ընտանիքով – մենք ամեն տարի
Կայցելենք այստեղ՝ սուրբ ուխտատեղի:

Հայկ Եղիազարյան